

նկարները, բնականապէս ոչ այնքան յըստակ, կարենային օգնել այս քանդակներու գծագրական ոճը և ժամանակը որոշելու:

Թէ բարեղոնական — ասուրական աստուածութիւնները անասնոյ կերպարանքով կը ներկայացուին, և մարդակերպ աստուծոյ պատկերին մօտը իւր «անասուն»ը (այսինքն զանազան կենդանիներու մասերէն բաղկացած խառն էակ մը) կրնար դրուիլ և դրուած է՝ ծանօթ է՝ արդէն: Ընդհակառակն աստուածները կենդանիներու վրայ ներկայացնելը կը համարիմ ես, ինչպէս յաճախ կրկնած եմ, փոխառութիւն մը ի վաղուց «Հետիտական» արեւմտեցն առնուած:

Մատայիայի քանդակները կը ցուցնեն, ինչպէս մանաւանդ շարժանկարի մը (projection) ժամանակ մեծցուցած միջոց յայտնի տեսնուեցաւ, բազմազան հետիտական (hethitisirende) գծեր: Միւս կողմանէ կանգուն կեցող անձը շատ յստակ կերպով գծուած է իբր ասուրական թագաւոր մը:

Թրգմ. Հ. Յ. ԱՍՏՈՒՐԱՆ

*

Աֆղաններու խմբը օր մ'ըսած է. Տէրութիւնս լճակ մ'է, որուն մէջ կարապ մը կը լողայ. լճին մէկ ափը վազը մը կայ (Անգղիա), միւս ափը՝ գայլ մը (Ռուսիա):

Աֆղան ժողովուրդը չորս ցեղէ կը բաղկանայ.

1. Տաճիկներէ (Tajiks), Արիական՝ արեւմաբ, լեզուով, տարագնեբով. — առոնց անունն է՝ որ մեր նախնիք յատկացուցին Արաբացոց, յետոյ Թիւրքերուն:

2. Բուն Աֆղանք կամ Գոշրանանք կամ Բեն-ի-Խարայէ, որ հրեայ են աւանդութեամբ, լեզուով, դիմագծութեամբ, և գահակալող ընտանիքը տուած են:

3. Գիլգաներ, ցեղով Թուրք:

4. Հագարաններ, ցեղով մոնղոլ, լեզուով պարսիկ:

Բոլոր Աֆղանները ընդ ամէնը՝ 4 միլիոն են:

ԼԵԻՍՈՒՍՅՈՅ

ԿԵԱՆՔԻ ՄԱՍԻՆ

III.

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿԵԱՆՔ

Պեսսիմիստական փիլիսոփայութիւնների և սովորական ինքնասպանների վիշտութիւնները ցոյց են տալիս, որ կայ միայն մէկ «Էս» և նորա ձգտումն դէպ ի կատարեալ կենդանական կեանքը, և որ այդ «Էսը» և նորա ձգտումները չեն կարող բաւականութիւն ստանալ: Նորա կարծում են, որ երկրորդ «Էս» էլ կայ, սակայն այդ եսը ոչ մի հակում չունի դէպի կեանքը, որովհետեւ հասկանում է նորա ամբողջ ոչնչութիւնը:

Եթէ ես ինձ տալիս եմ գոյութեան այն տեսակին, որ հակուած է դէպի կենդանական կեանքը, անմիտ կերպով եմ ապրում և դորանում չը կայ ընթանկութիւն: Իսկ եթէ որ արոււմ եմ այն սկզբունքին, որ հասկանում է կեանքի ոչնչնչութիւնը, ինձանում չի մնում ապրելու ցանկութիւն. ուստի, — ասում են այդպիսի մարդիկ, — երբ որ կեանքը դժուարանում է, ես նրանից բաժանում եմ, լինի այդ այն խաւարը, որը չէ կարող նուանել լոյսին:

Ճշմարտութեան ուսուցումը միշտ գոչել է, որ մարդկութեան տիրում է անբառնայի և իսկական բաղդաւորութիւն, որ մասշտիբ է իւրաքանչիւրին: Այդ հէնց այն բաղդաւորութիւնն է, որը յայտնի է բոլորին և դէպ ի որը ձգտում է ամեն մի չապականուած հոգի: Երեխաները և այն մարդիկ, որոնց միտքը խաւարել է սոփեստութիւնից, գիտեն այն զգացմունքը, որ որոշում է մարդկային կեանքի բոլոր հակասութիւնները և որը հնարաւորութիւն է տալիս աւելի ևս բաղդաւոր լինելու: Այդ զգացմունքը սէրն է:

Մէջը՝ կենդանական բնութեան այն ձեւերից մէկն է, որը ենթարկուած է բարձրագոյն օրէնքի կանոնին: Նորա ամենաբարձր զարգացումը մարդկութեան միակ բանական գործունէութիւնն է:

Մարդու կենդանական անձը բաղդաւորութիւն է պահանջում. բանականութիւնը ցոյց է տալիս մեզ այդ ձգտումի սխալ լիւնելը, ցոյց է տալիս, որ ինքնասիրութեան մէջ չըկայ երջանկութիւն և որ միակ և իսկական երջանկութիւնը, որ հնարաւոր է մեզ համար, այն է, որտեղ չըկայ ո՛չ մաքառում, ո՛չ յագեցում, ո՛չ վերջ:

Եւ ահա, որպէս միայն այդ կողպէջի համար շինուած բանալի, մարդ իր հոգու մէջ մի զգացմունք է գտնում, որ նրան տալիս է հէնց այն երջանկութիւնը, ինչը նորա բանականութիւնը միակ հնարաւոր բանն է համարում:

Մէջը ո՛չ միայն որոշում է կեանքի հակասութիւնները, այլ օգտուում է այդ հակասութիւններից, որպէս զի յայտնի կացուցանի իրեն՝ — կենդանական անձի տանջանքները և այդ տանջանքների թեթեւութիւնն էլ կազմում է սիրոյ գործնէութեան զլիսաւոր առարկան:

Կենդանական անձը ձգտում է օգտուիլ ուրիշներից, բայց Մէջը ինքն է տրւում ուրիշներին, մեզ խրախուսում է մեծ զոհողութիւններ անելու մեր մարմնաւոր զոյլութեամբ և այդպիսով ոչնչացնում է մաս հուան երկիւղը:

Բայց, — ասում են այդպիսի մարդիկ, որոնք այս կեանքում միայն կենդանական զոյլութիւն են տեսնում, — «սէրը, քանի նա շարունակուած է, տանջող զրութիւն է ստեղծում և շուտով դադարում»: Ոչ պատճառով էլ սէրը նրանց համար նոյնպէս ողորմելի և կեղծ բան է երևում, ինչպէս և միւս այն տրամադրութիւնները, որոնք յաճախ խանգարում են կեանքի ուղիղ ընթացքը և նրան տանջալից են դարձնում: Այդպիսի մարդիկ սիրելու միջոցին ինքնին այնպէս են զգում, ինչպէս իրեն զգում է բուն արեւի ծագման ժաւմանակ, թէ և, ուղիղ է, նոքա ընդունում

են նորանում մի ինչ որ առանձին և կարեւոր բան կայ:

Այդ սխալ հասկացողութիւնը առաջ է գալիս նրանից, որ այդպիսի մարդկանց համար սէրը ներկայանում է որպէս բազմաթիւ տրամադրութիւններից մէկը, և ո՛չ թէ որպէս կեանքի էութիւն: Նոքա ընդունում են, որ մարդ կարող է էրեքմէ զբաւուիլ գիտութիւնով, երեքմէ տեղ ձեռք բերելով, երեքմէ սիրով: Նոքա խօսում են միայն այն սիրոյ մասին, որ ինքնա-սիրութեան տեսակներից մէկն է կազմում, և որի զօրութեամբ մարդ ուրիշների ունեցածը զոհում է «իւր երեխայի կամ ընկերոջ» համար, որի զօրութեամբ հայրը, իրեն տանջանքի ենթարկելով, խլում է հացի վերջին պատուր ուրիշների քաղցած երեխաների ձեռքից, որպէս զի դրանով ապահովացնէ իր երեխաներին:

Այդ այն զգացմունքն է, որով մարդ սիրում է մի կնոջ և տանջւում է այդ սիրուց ու ստիպում է նրան ևս տանջուիլ՝ զայթաղեցնելով նրան կամ նախանձից սպանելով իրեն և նրան: Այդ այն զգացմունքն է, որով մարդ զբաւուելով սիրած պարապունքով, տանջւում է իրեն և սուրիշներին. վերջապէս այդ այն զգացմունքն է, որով մարդիկ չեն կարող համբերել, երբ տեսնում են իրենց հայրենիքը ուրիշներից անպատուած և դաշտերը ծածկում են իրենց և օտարները դիակներով ու վրաւորեանքներով:

Բայց սիրելի կը նշանակէ բարիք գործել: Մենք բարիք ենք ցանկանում միայն նրանց, որոնց սիրում ենք, բայց գտնում ենք, որ այդ բարիքը միմիայն նրանց համար գործել կը նշանակի կամ վնասել ուրիշներին կամ, ամենաքիչը, արհամարհել նրանց:

Եւ ի՞նչ չափով պէտք է իմ ունեցածը զոհեմ ուրիշներին ծառայելու համար, և ես որին պէտք է ծառայեմ, եւ ի՞նչ չափով կարող եմ իմ մասին հոգ տանել, որ վերջում, սիրելով ուրիշներին, կարողանամ ծառայել նրանց:

Այդպէս էր այն դժուար հարցը, որ

օրէնսգէտները տուեցին Գրիստոսին՝ հար-
ցնելով Նորան. — «Ո՞վ է իմ մերձա-
ւորը», Գրիստը է այն պատճառով, որ
մերը չըպէտք է մոռանանք, որ ամեն տե-
սակ մարմնական բաղդաւորութիւն մէկը
ձեռք է բերում ի փնտս միւսների:

Բայց ինչպէս որոշենք, թէ ի՞նչ
գնով և ի՞նչ չափով պէտք է օգնենք և ու-
րի՛ն ծառայենք: Արդեօք բոլոր մարդ-
կանց, թէ միայն մեր հայրենակիցներին:
Մեր հայրենակիցներին թէ մեր բարեկամ-
ներին: Մեր բարեկամներին թէ մեր կա-
նանց. մեր կանանց թէ մեր զաւակնե-
րին. մեր զաւակներին թէ (վերջում ու-
րիշներին ծառայելու հնարաւորութիւն ու-
նենալու նպատակով) մեզ:

Այդ բոլոր մարդիկ մեզանից սէր են
պահանջում, և այդ բոլոր պահանջները
այնպէս շարժապատում են միմեանց հետ,
որ անհնար է ծառայել մէկին, օգնութիւն
նից չըբերելով միւսին:

Եւ այն, ինչ որ ընդունուած է անուա-
նել սէր, պատասխան չէ տալիս և չի
լուծում այս դժուարութիւնը:

Աշխարհը տառապեցնող չարիքների մե-
ծամասնութիւնը բղիւղում է այն զգացմուն-
քից, որ սխալմամբ սէր է կոչւում և այն-
պէս է նման իսկական սէրին, ինչպէս
կենդանական կեանքը՝ մարդկային կեան-
քին: Այն, ինչ որ ընդունուած է կո-
չել սէր, աւելի բան չէ, քան մեր անձ-
նական բաղդաւորութեան մի քանի պայ-
մանների առաւելութիւնը ուրիշների ու-
նեցածիցը:

Երբ մարդ ասում է. թէ ինքը սիրումէ
իր կնոջը, իր զաւակներին կամ բարե-
կամներին, նա սովորաբար դորանում
հասկանում է, որ այդ անձնաւորութիւն-
ների ներկայութիւնը աւելացնում է իր
անձնական կեանքի բաղդաւորութիւնը:

Բայց այդ մի կարգի արարածների,
առարկաների կամ պարապմունքի առաւե-
լութեան զգացմունքը չի կարող սէր կո-
չուիլ, որովհետեւ նրանում պակասում են
սիրոյ էական գծերը, յատկապէս այն
գործնութիւնը, որի խնդիրը և նպասակը

մեր սիրելի անձանց բաղդաւորութիւնն է:

Մէկ մարդկանց՝ միւսներից առաւելու-
թիւն տալու ոյժը միայն անպատուաւոր
ծառ է, որի վրա կարող է պատուաւա-
ւորիլ իսկական սէրը իր պտուղներով:

IV.

ՀԱՍՆԵԼՈՒ ՄԻՋՈՑԸ

Իսկական սէրը հնարաւոր է դառնում
միայն այն ժամանակ, երբ մարդ հասկա-
նում է, որ իր կենդանական անձի հա-
մար բաղդաւորութիւն չէ կարող լինել:
Միայն նա է հասկանում իսկական սէ-
րը, ով ո՞չ միայն հասկացել է, այլ և իր
կեանքով զաւանում է այդ ճշմարտութիւ-
նը, իսկ ով ուզում է իր հոգին փրկել,
նա կորցնում է նրան, իսկ ով ուզում է
իր հոգին այս աշխարհում, նրան կը պահ-
պանի յաւիտեական կեանքի համար:

Սէրը ուրիշ արարածների գերադասու-
թիւնն է իրենից, իր կենդանական կեան-
քից: Դա բարեացակամութեան դրութիւն
է ղէպ ի բոլոր մարդիկ և ղէպ ի ամեն բան.
դա յատուկ է միայն երեխաներին, իսկ
չափահասների համար այդ սկսւում է միայն
անձնուրացութեան ղէպը: Այդ Գրիս-
տոսի վարդապետութիւնն է մեր կեան-
քում: Թող մեզանից իւրաքանչիւրը գտնէ
մէկ անգամ, երբ նա վաս է տրամադրուած
ղէպի ուրիշները, ազնիւ և անկեղծ ասի
իրեն. — «Ինձ համար միւսնոյն է», «Ինձ
ոչինչ հարկաւոր չէ», և թէ և մի առժա-
մանակ իսկապէս որ ոչինչ չի ցանկանայ
առանձնապէս իրեն համար. և իւրաքան-
չիւր մարդ հէնց այս ամենահասարակ
ներքին փորձից կ'իմանայ, թէ ի՞նչպէս
մի ակնթարթով, նայած թէ նա ի՞նչ աս-
տիճան անձնուրաց է, կորչում է ամեն
տեսակ չարակամութիւն: Յետոյ նա թող
նկատի, թէ ի՞նչպէս ղէպ ի բոլոր մարդիկ

1. Տօլստոյի մի հատուածը «Աէր». Թրգմ. վ. Ա-
զատեանի, տեւ «Բազմադէպ». 1905-7.

և արարածներ ունեցած տրամադրութիւնը դուրս է վազում հեղեղի նման, որ մինչև այդ թագնուած էր : Իսկ եթէ այդպիսի մարդը ցանկանում է ճաշակել կատարեալ բաղդատրութիւն նա չը պէտք է դրա վրա կանգ առնի : Որպէս զի մարդս կարողաւ նայ բոլորովին անկեղծ կերպով սիրել մէկին, անհրաժեշտ է, որ նա ամենից առաջ ների ամենընին. — նոյն իսկ նրանց, որոնք մեզ վերաւորել են, և նրանց, որոնք անարդար են վերաբերում դէպի մեզ : Մենք աւելին պէտք է ասենք, — մենք պէտք է հրաժարենք նրանց արժանի պատժին ենթարկելու ցանկութիւնից և նրանց բարիք ցանկանք նոյն իսկ այն ժամանակ, երբ տեսնում ենք, որ նոքա կեղտոտ միջոցներով ձեռք բերած հարստութեամբ են օգտուում :

Այն միտքը, թէ չարերը պէտք է տանջուին այս կամ ապագայ կիանքում, ծագում է մեր՝ այդպիսի մի պատուհաս ցանկանալուց : Էլ հէնց այդ ցանկութիւնից մենք պէտք է հրաժարենք :

Ոչ սակաւ կարող է պատահել, որ մարդ, կանգնած լինելով հոգեկան կիանքի շատ ստոր աստիճանի վրա, — շատ մեծ բաղդատրութիւն է վայելում՝ իր ընդունակութիւնների չափով, նման կկուին, որ օտարացած լինելով դէպի իր ձագուկները ունեցած սիրուց, չի տուժում այդ կորստից, այլ միայն չի ճանաչում մայրական սիրոյ այն անասելի վայելչութիւնը, որի մասին նա չէ կարող նոյն իսկ որևէ գաղափար ունենալ : Բայց երբ մենք հնազանդուում ենք բնութեան հրամաններին, որոնք մեզ համար պարզում են Աստուծո անվերջ իշխանութիւնը և ազատում մեր հոգին ամեն տեսակ դաժնութիւնից, այն ժամանակ մեզ համար սկզբուում է կեանքի իսկական վայելչութիւնը :

Միայն այսպիսի ընդհանուր բարեացակամութիւնից կարող է առաջ գալ ճշմարտ սէր դէպի բոլոր մարդիկ :

Միայն այսպիսի սէրն է որոշում կարծեցալ հակասութիւնը կենդանական գոյութեան և գիտակցական կեանքի միջև :

Այն սէրը, որի հիմքը չէ կազմում կենդանական կեանքից հրաժարելը և, հետևապէս, բարեացակամութիւն դէպի բոլոր մարդիկ, այդ միայն հասարակ կենդանական կեանք է և աւելի շատ է դժբաղդ ու անմիտ, քան այն կեանքը, որ զուրկ է այդ ունայն սիրուց : Բուռն ցանկութեան զգացմունքը, որը սէր է կոչուում, ոչ միայն զաղարեցնում է գոյութեան համար մղուած կոխը, ո՛չ միայն չի ազատում անձը վայելչութեան ետեք ընկնելուց և չի փրկում մահուանից, այլ, ընդհակառակը, աւելի է խաւարեցնում կեանքը աւելի ահեղ դարձնում կոխը, սաստկացնում է իր և ուրիշների վայելչութեան ծարաւը և աւելացնում իր և ուրիշների մահուան մասին ունեցած սարսափը :

Այն մարդը, որը իր կեանքը իր կենդանական անձի բաղդատրութեան մէջ է ընդունում, որը իր ամբողջ կեանքի ընթացքում միջոցներ է աւելացնում իր կենդանական անձը երջանկացնելու՝ ձեռք բերելով և պահպանելով հարստութիւն, ստիպում է ուրիշներին ծառայել իր կենդանական երջանկութեանը և այդ երջանկութիւնը բաժանում է այն անձնաւորութիւնների միջև, որոնք աւելի օգտակար են իրեն՝ իր անձնական երջանկութեան համար, — նա լինչպէս նուիրի իր կեանքը, երբ նորա այդ կեանքը իրենով չի պահպանում, այլ ուրիշներով : Էլ աւելի ևս դժուար է ընտրել, թէ իր գերագասած մարդկանցից որին տայ իր զանձած երջանկութիւնը :

Որպէսզի մարդ կարողանայ սիրել, այսինքն բարիք գործել՝ զրկելով իրեն, նա պէտք է զաղարի ատելուց, այսինքն չարիք գործելուց, և պէտք է զաղարի իր անձնական երջանկութեան համար մէկ մարդկանց միաներից գերադասել :

Մարդու կեանքի բաղդատրութիւնը սիրոյ մէջ՝ նոյնքան քնակաւ է, ինչպէս բոյսի երջանկութիւնը լոյս տեղում, և ինչպէս որ ո՛չ մի բանով չը ծածկուած բոյսը չի կարող հարցնել և չի էլ հարցնում,

թէ դէպի ո՞ր կողմը նա պէտք է աճի, և լաւ է արգեօք լոյսը, կը սպասէ՝ արգեօք ուրիշին, աւելի լաւին, այլ պահում է միայն այն միակ լոյսը, որը գոյութիւն ունի, և ձգտում է դէպի նա, — նոյնպէս էլ անձնական երջանկութիւնից հրաժարուող մարդը չի մտածում այն մասին, թէ ինքը որչափ պէտք է ուրիշներին խլած բանից տայ մէկին, և իր սիրած արաւածներին որին տայ այդ, և չը կա՞յ արգեօք աւելի լաւ սէր, քան այն, որը պահանջներ է անում, — այլ նուիրում է իւրեն, իր կեանքը այն սիրոյն, որը մատնէ իր է իրեն և որը գոյութիւն ունի իրեն համար: Միայն այդպիսի սէրն է լիովին բաւականութիւն տալիս մարդու բանականութեան:

Սէրը միայն այն ժամանակ է սէր, երբ նա պատրաստ է ուրիշի համար զոհաբերութիւն անել: Միայն այդ ժամանակ է մարդ ուրիշին նուիրում ո՞չ միայն իր ժամանակը, իր ոյժերը, այլ, երբ որ նա զրոծ է դնում իր մարմինը սիրած արարածի օգտին, նուիրում է նորան իր կեանքը, — և միայն այդպիսի սիրոյ մէջ ենք զտնում մեզ համար բազդաւորութիւն և վարձաւորութիւն:

Հէնց իսկ և իսկ այդպէս է բանուորը նուիրում իրեն, իր մարմինը՝ ուրիշին կերակրելու համար, երբ աշխատանքով մաշում է իրեն՝ ուրիշներին երջանկութիւն տալու համար, և զբանով մօտեցնում է իր մահուան ժամը:

Բայց այդպիսի սէրը հնարաւոր է միայն այնպիսի մարդու համար, որը զոհաբերութեան սահման չի որոշում թէ իր և թէ այն ուրիշներին նկատմամբ, որոնք աւելի մօտ և թանկագին են իր համար:

«Սիրիբ քո Ամենակարող Աստծուն քո սրտով և քո ամբողջ հոգով և քո ամբողջ կարողութեամբ: Այս է առաջին և ամենազլխաւոր պատուիրանը»:

Երկրորդն էլ սրան նման է. — «Սիրիբ քո մերձակաւորին այնպէս ինչպէս քեզ ես սիրում», առաջ օրէնսգէտը Քրիստոսին: Եւ զբան Յիսուս պատասխանեց. «Դու

ուղիղ տասցիր, այդպէս էլ վարուիր, այս ինքն սիրիբ Աստծուն և մերձակաւորիդ և կ'ապրես»: Մատթ. ԻԲ. 36-38. — Ղուկաս Ժ. 27-8):

«Մենք գիտենք, որ մահուանից դէպի կեանք փոխադրուեցինք, ասում է Քրիստոսի աշակերտը, որովհետեւ սիրում ենք մեր եղբայրներին» (Պ. Յովհ. 14):

Ճշմարիտ և իսկական սէրը նոյն ինքը կեանքն է:

Կենդանի մարդկանցից ո՞ւմը ծանօթ է այն երանելի զգացմունքը, որ ամենից շատ զգացուել է մանկութեան հասակում, երբ հոգին դեռ ապականուած չի լինում խաւրհարայութեամբ, որ խեղդում է մեր մէջ կեանք: Ո՞ւմը ծանօթ է բարեացակամութեան այն երանելի զգացմունքը, երբ մարդ ցանկանում է սիրել բոլորին, — և՛ մերձակորներին, և հօրը, և մօրը, և եղբայրներին և չար մարդկանց, և թշնամիներին, և շանը, և ձիուն, և բոյսը:

Սակայն մարդ ցանկանում է, որ աւմենքը բաղդաւոր լինին, որ ամենքը նուրեն իրենց, իրենց ամբողջ կեանքը այն բանին, որպէս զի բոլորը միշտ լաւ և ուրախ ապրեն: Եւ միայն այդ է հէնց այդ սէրը, որի մէջ է կայանում մարդու կեանքը:

Մարդկանց տարբեր ցանկութիւններին միջև նկատելի է լինում այնպիսի մի բնութեան, նման այն ընծիւղին, որ բուսած է լինում ագրակոյտի վրա ուրիշ վայրի ընծիւղներին մէջ: Սկզբում մարդկանց թուում է, թէ այդ ընծիւղից պէտք է աճի ճշմարիտ սիրոյ այն ծառը, որի տակ պէտք է պատասխարուին թոշունները և որ բոլոր մնացած ընծիւղները այնպէս են, ինչպէս դա:

Մարդիկ առաջ գերադասում և խնամում են այն ընծիւղները, որոնք աւելի արագ են բուսնում, և կեանքի միակ ընծիւղը չբրանում ու ոչնչանում է, իսկ յաճախ աւելի վառն է լինում, — մարդիկ լսել են, որ այդ ընծիւղներին թուում կայ մի իսկականը որ կեանք է տալիս և կոչւում է սէր, և ահա զբան ոտնադրակ

տալով, սկսում են անհեցնել աղբի մէջ քուտած մի ուրիշ ընծիւղը՝ կոչելով նրան սէր:

Ո՞ր դեռ քիչ է — մարդիկ կոպիտ ձեռքերով իլում են ընծիւղները և գոռում. «ահա՛ նա, մենք գտանք նրան, այժմ մենք ճանաչում ենք նրան, կ'անհեցնենք նրան, սէ՛ր, սէ՛ր, ամենաբարձր զգացմունք, ահա՛ նա»: Եւ սկսում են նրան տեղափոխել և ուղղել, և, իբրև թէ խնամելով, այնպէս են ճմլում, որ ընծիւղը չորանում է՝ դեռ չը ծաղկած: Ո՞յն ժամանակ նրանք ասում են. «այս բոլորը յիմարութիւն է, անմտութիւն, զգայնութիւն»: Բայց սիրոյն միայն մի բան է հարկաւոր, — որ մարդիկ նրանից կը ծածկեն ճշմարտութեան լոյսը, որը միայն կարող է արագացնել և նպաստել նրա ծաղկմանը:

Եւ, սակայն, այն մարդը, որ հասկանում է կենդանական գոյութեան ամբողջ խարճութիւնը և կեղծութիւնը, և համոզւում է, որ մի միայն ճշմարիտ սիրոյ ազատութիւնն է բաղդատութիւն պատճառում, և նորա ամբողջ ֆիզիքական գոյութիւնը իր կենդանական անձի աստիճանական ոչնչացումն է, և որ պարզ տեսնում է, թէ ի՞նչպէս իր այդ կեանքը հետզհետէ մօտենում է անխուսափելի մահուան՝ այդպիսի մարդը ջանում է, սակայն, ամեն տեսակ միջոցներով պահպանել այդ խորտակող գոյութիւնը, բաւականութիւն տալով իր ցանկութիւններին և իրեն զրկում է կեանքի միակ երջանկութեանը տիրանալու հնարաւորութիւնից — ճշմարիտ սիրուց:

Ճշմարիտ կեանքը չըհասկացող մարդկանց զործնէութիւնը միշտ ուղղուած է գոյութեան կուի, զուարճութիւններ ձեռք բերելու, իրենք տանջանքներից ազատ պահելու և իրենից անխուսափելի մահը հեռացնելու վրա:

Բայց զուարճութիւններ ձեռք բերելու ցանկութիւնը սաստկացնում է կուի մղումը, տանջանքները, և մօտեցնում է մահը:

Մահուան մերձաւորութիւնը իրենցից թագցնելու նպատակով՝ այդպիսի մարդիկ միայն մի միջոց գիտեն. — աւելի՛ ևս շատացնել զուարճութիւնները. բայց զուարճութիւններին սահման կայ, որից դէնը նրանք փոխում են տանջանքի, և միայն ուժեղացնում են տանջանքների զգալը, աւելի՛ մերձաւոր մահուան երկիւղը:

Կեանքը չը հասկացող մարդկանց համար այդ երկիւղի գլխաւոր պատճառը թագնուած է նրանում, որ նրանք զուարճութիւն են համարում այն, ինչը հաւասար կերպով չէ կարող բաժանուիլ բոլոր մարդկանց միջև, այլ պէտք է խլուած լինի ուրիշներից, պէտք է ձեռք բերուած լինի ոյժով, չարութիւնով, դէպի բոլոր մարդիկ ունեցած բարեացակամութեան այն զգացմունքի ոչնչացումով, որպիսի զգացմունքը սիրոյ արմատն է կազմում:

Չուարճութեան այդ տեսակը միշտ ուղղակի հակառակ է սիրոյն, և որքան լաւ բուած են լինում վայելչութիւն ձեռք բերելու համար զործադրուած ջանքերը, այնքան անկարելի է դառնում մարդուն մատչելի միակ երջանկութիւնը, այսինքն սէրը:

Մարդկանց թւում է, որ աղքատ բանւորի կամ հիւանդ մարդու գոյութիւնը վատ է, անբաղդ է, իսկ հարուստինը կամ առողջ մարդունը լաւ է և բաղդաւոր, և մարդիկ իրենց մտքի ամբողջ ոյժը գործ են դնում այն բանի վրա, որ խուսափեն վատից, զփրագղութիւնից ու հիւանդութիւնից և հասնին բաղդաւորութեան, հարստութեան, առողջութեան:

Նորա կարծում են, թէ մարդկութեան առաջադիմութիւնը նրանումն է կայանում, որ ձեռք են բերում և յանձնում յաջորդ սերունդներին աւելի լաւ միջոցներ՝ այդպիսի կեանքին հասնելու:

Ո՞րք պատճառով մարդիկ կուտում են միմեանց հետ, աշխատելով հեռացնել մահը, իրեն ամբողջ կարողութեամբ պահպանելով կեանքը, որը նրանք ժառանգել են հայրերից կամ կազմակերպել իրենց համար: Բայց այդ բոլորը յիմարութիւն է և անմտութիւն:

ինչ էլ որ լինի նախապաշարմունքների արմատը, որը մենք պէտք է փորձենք՝ թէկուզ այդ որքան էլ տանջալից լինի, մեզանից իւրաքանչիւրը իր սրտում պիտի դրոշմի այն ճշմարտութիւնը, որ սիրուց դուրս երջանկութիւն չըկայ և ինքնասիրութիւնից դուրս — չարութիւն։ Միայն այդ ճշմարտութիւնն է բաց անում դէպի երջանկութիւն տանող դուռը։

Թարգմ. ՎԱՀԱՆ ԱՅՏՅԱՆ

Շարոյարէլի

ԱՆԳՆԱՅԻ ՄԱՏԵՆԱԳԻՆԵՐՈՒՆ

Վ. Ա. Ս. Ա. Կ. Ը

Անգղիոյ գրավաճառութեան վիճակին և անոր փոխարինութեանց վրայ *Mercur de France* ին մէջ հրատարակեալ *Arnold Bennett* ին մէջ գրութենէն քանի մը կէտեր կ'առնունք որոնք կրնան մեզի խորհրդածութեանց նիւթ ըլլալ։

Թէ ինչ աստիճանի կը հասնի անգղիացիներուն մէջ կարդալու փափաքը, հետեւել կը բացատրէ։ Մատենագրական կրկին տպագրութիւնները համեստ գիններով կը վաճառուին, մինչդեռ նոր գրուածները ամենաբարձր։ Անգղիական նորավիպի մը սովորական մաքուր գինը գրեթէ 5 ու կէս ֆր. է, բայց ուրիշ գրուածներ, նոյն իսկ շատ անգամ աւելի թուով ալ վաճառուած, ինչպէս կենսագրութիւնը, ճանապարհորդութիւնը, և զբոսամարդը (*sport*) շատ աւելի բարձր գնեցով կ'երթան որ մեզի երեակայական կ'երեւին։ Անգղիա նշանաւոր անձ մը չի մեռնիր որ անձառ չի տայ կենսագրական մէկ կամ երկու հատորներու գրութեանց, և ասոնք հրապարակ կը դրուին 20է 40 փրանկաց։ Շատ կան ճանապարհորդը և բոսամարդիկը (*sportsmen*) որոնք արկածներու կ'ենթարկեն իրենք գիրենք ճանապարհորդութիւններով և ամէն տեսակ վրտանգներով, միայն իրենց տպաւորու-

թեանց և յիշատակարաններու հատոր մը կազմելու համար։ Այսպէս G. Shillingsի *In wildest Africa* անուանեալ մէկ գրութիւնը զարգարեալ վայրենի կենդանեաց լուսանկարներով և զարմանալի պատմութիւններով լի, հրատարակեցաւ այս վերջերս 5000 փրանկ 29 փրանկի որ անմիջապէս սպառեցաւ։

Իրաւ է որ ժողովրդեան մէկ մեծ մասին համար կան յանօթատու գրատուններ *circulating libraries* որոնք 13է 150 փրանկի ընկերագրութեամբ ամէն տարի շորտէն հինգ հազար փրանկի արժողութեամբ գրքեր փոխ կու տան իրենց իւրաքանչիւր ընկերին։ Երեք են զիսաւոր յանօթատու գրատուններ. *Mudie's*, *Smith's* և *Times Book Club*. ասոնց փոքրագոյնը որ է երրորդը՝ 80,000է աւելի ընկեր ունի։ Ամենաբարձր գնեցով հրատարակեալ գրոց մէկ մեծ մասը այս գրատուններս կը գնեն, բայց ոչ երկու, երեք կամ տասն թուով, այլ շատ անգամ չորսըստուր օրինակներ, ընկերաց անթիւ պահանջները գոհացնելու համար՝ որոնք անմիջապէս կ'ուզեն կարդալ ժամանակին նորաձեւութիւն եղած հատորները (*just out*)։ *Mudie's* գրատունը, կ'ըստի որ 80,000 փրանկի արժողութեամբ Վիկտորիա թագուհւոյն նամակներու օրինակներ գնեց։

Mudie's և *Smith's* շատ անգամ կը դաշնադրին իրարու հետ ուրիշ գրավաճառաց հակառակ, գինները վար իջեցնելու համար, որոնք առասպելական արժէքներու կ'ուզեն հասցնել։ Իրենց շնորհիւ այսօր նորավիպի մը սովորական գինը 5 փրանկը չանցնիր, մինչդեռ քանի մը տարի առաջ քառասուն փրանկի կը հասնէր։

Sir Walter Besant կը հաշուէր որ տասնութերկու տարի առաջ՝ որ Անգղիա յիսուն նորավիպ գրող կային որոնց աշխատութիւն ըտարին իրենց առ նուազն քսանուհինգ հազար փր. կը պտղաբերէր։ Այսօր այս բաղադրու խուճրդ անտարակոյս աւելցած է։ Հոչակաւոր փաստարան մը, սենդանաւոր մը, մեծ դեղավաճառ մը մրցա-